№ 54 Ապրիլ 1 (13) 1880 Ապրիլ 1 (13) № 54

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Հացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ։—Ներքին տեսութիւն։ Նամակ Մեծ-Ղարաբիլիսայից։ Նամակ Երևանից։ Նամակ Մոսկվայից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Անգլիա։ Աֆղանիստան։ Զինուորական թատրոններ։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Պարսկաստանից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

Անգլիական պարլամենտի վերջին ընտրութիւնները դուշակել են տալիս որ ապագայ պարլամենտի մեծամասնութիւնը բաղկացած կը լինի ազատամիտ կուսակցութեան անդամներից։ Այդ կուսակցութեան վերջին ընտրողական յաղթութեան հետ մենք մեր ըրադրի արտաքին տեսութեան մէջ կաշխատենք դեռ աւելի մանրամասն կերպով ծանօթացնել մեր ընթերցողներին։

Այժմ միայն այսքան կասենք, որ ինչպէս երևում է անգլիական ազատամիտ կուսակցութեան գլուխը համարվում է այժմ ոչ թէ լորդ Գլադստոն, այլ մարկիզ Հարտինգտոն։

Եթէ ազատամիտ կուսակցութիւնը յաղթող հանդիսանայ պարլամենտում, այսինքն եթէ նա կը կազմի պարլամենտի մեծամասնութիւն,—այժմեան մինիստրութիւնն էլ ստիպված կը լինի իր հրաժարականը տալ և կառավարութիւնը ի հարկէ կը կազմվի ազատամիտ կուսակցութեան ներկայացուցիչներից։

Դեռ ընտրութիւնների սկսվելու ժամանակ անգլիական ազատամիտ կուսակցութիւնը յայտնել է մարկիզ Հարտինգտոնի բերանով թէ ի՞նչ ուղղութեան պէտք է հետևի նա, եթէ հանի իշխանութեանը։

Մեզ, ի հարկէ, աւելի հետաքրքիր է իմանալ թէ ի՞նչ ուղղութեան կը հետևի ազատամիտ մինիստրութիւնը արտաքին քաղաքականութեան, մանաւանդ արևելեան խնդրի վերաբերութեամբ։ Ահա ինչ է յայտնել այդ մասին մարկիզ Հարտինգտոնը։ Նա յայտնել է, որ ազատամիտ կուսակցութիւնը չի պաշտպանի Թիւրքիային, եթէ Ռ. Դուռը հրաժարվի իրագործել արմենական բարեկարգութիւններ իր պետութեան վարչութեան մէջ և կաշխատի մինչև անգամ ձեռք բերել Եւրոպայի համաձայնութիւնը՝ փոխարինել եւրոպական Թիւրքիայում օսմանեան իշխանութիւնը ուրիշ մի իշխանութեամբ։

Եթէ ազատամիտ կուսակցութիւնը Անգլիայում, կառավարութեան ղեկը իր ձեռքը առնելուց յետոյ, պիտի այդքան մեծ ուշադրութիւն դարձնի եւրոպական Թիւրքիայի վրա, անկասկած նա կը հոգայ և Թիւրքիայի ասիական նահանգների մասին։

Ուրեմն Թիւրքաց հայերի վիճակը կարող է մեծ փոփոխութիւնների ենթարկվել անգլիական կառավարութեան փոխվելով։

Բայց այնու ամենայնիւ Թիւրքաց հայերը պէտք արթուն մընան, պէտք է շատ աշխատեն, պէտք է իրանց ամբողջ եռանդը ցոյց տան և չը պէտք է յանձնեն բաղդի բերմունքին իրանց դրութեան բարւոքման ապագայ վիճակը։

Այն երեք անձինք, որոնք երևի կը լինեն անգլիական կառավարութեան այժմեան ներկայացուցիչներ՝ Հարտինգտոն, Գլադստոն և պահպանողական կուսակցութենից դէպի ազատամիտ կուսակցութիւնը նորերում անցած լորդ Դէրբի, վաղուց է արդէն յայտնի են որպէս պաշտպաններ Թիւրքիահպատակ քրիստոնեաների և նրանք յայտնի են և Թիւրքաց հայերին, որպէս նրանց բարեացակամներ։

Հիմա պէտք է զործ պահանջել Թիւրքաց հայերից, մանաւանդ Կ. Պոլսի ինտելիգենցիայից։

Եթէ այժմ նրանք չը կարողանան գործել և իրանց ձայնը լսելի անել Եւրոպային և Անգլիային,—այնուհետև կարող է ուշ լինել։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱԲԻԼԻՍԱՅԻՑ

15 մարտի

Մեծ-Ղարաբիլիսայի հոգևոր դպրոցի աշակերտներս ցաւոք սրտի կարդացինք «Մշակի» համարներում վանի մեր սովատանջ եղբայրների աննախանձելի դրութիւնը, լսեցինք սովամահ եղբայրներիս դառն հառաչանքը, ծանօթացանք ձիւնի տակից արմատներ կրծող որբ և անմեղ մանուկների հետ, որոց թշուառ վիճակը չատ խոր խոցեց մեր սրտերը։ Էլ չը կարողացանք դիմանալ նորանց արտասուքներին, իսկոյն մի փոքրիկ ստորագրութիւն բացեցինք մեր աշակերտակից եղբայրների մէջ, և հաւաքեցինք եօթը ռուբլի, որը նուիրատուաց ցուցակի հետ ուղարկելով խմբագրութեանդ, խոնարհաբար խնդրում ենք այս մեր մանկական սրտից բղխած փոքրիկ լուման հասցնել վան մեր սովատանջ եղբայրներին։—Ահա նուիրատու աշակերտների անունները։

Միլոն Չալալեանց 30 կ., Սարգիս Թորոսեանց 20 կ., Աղէքսանդր Իսկանդարեանց 20 կ., Արշակ Աքմաղչեանց 20 կ., Աղէքսանդր Տէր-Նասիանց 20 կ., Ներսէս Կողմանեանց 10 կ., Խաչակ Ազատեանց 15 կ., Աղէքսանդր Նալբանդեանց 20 կ., Աստուր Պետրոսեանց 20 կ., Յովհաննէս Աղամալեանց 25 կ., Դաւիթ Աբոյեանց 20 կ., Յովակիմ Շարբաթեանց 20 կ., Ս. Բայանդուրեանց (փոստի ծախս և) 40 կ., Մարտիրոս Ազատեանց 20 կ., Աղէքսանդր Ռուստամեանց 20 կ., Գէորգ Շարբաթեանց 20 կ., Գրիգոր Թումանեանց 10 կ., Սարգիս Փերոյեանց 15 կ., Գէորգ Աբոյեանց 15 կ., Աղէքսանդր Աբոյեանց 15 կ., Արմենակ Միրզայեանց 20 կ., Ալիբէգ Եաբրեանց 10 կ., Մատթէոս Փալանդուզեանց 10 կ., Բագրատ Միրզայեանց 10 կ., Գրիգոր Յովսէփեանց 5 կ., Լեոն Ամիրբէգեանց 10 կ., Աստուր Պապոեանց 5 կ., Գէորգ Ժամհարեանց 5 կ., Մնացական Բալոյեանց 5 ր., Խաչատուր Տէր-Սիմէոնեանց 15 կ., Մուշեղ Սիմոնեանց 15 կ., Կիրակոս Ազատեանց 5 կ., Նիկողայոս Քարհանեանց 9 կ., Վարդան Ամիրբէգեանց 10 կ., Յովսէփ Շահվերդեանց 5 կ., Աստուր Սիմէոնեան 5 կ., Գրիգոր Ժամհարեանց 5 կ., Յոհան Տէր-Սիմէոնեանց 5 կ., Արամ Միրզայեանց 5 կ., Աբրահամ Ազատեանց 5 կ., Ներսէս Նալբանդեանց 5 կ., Երուանդ Նալբանդեանց 5 կ., Լեոն Առաքելեանց 5 կ., Մատթէոս Աքմաքչեանց 5 կ., Աղէքսանդր Ամիրբէգեանց 5 կ., Բագրատ Օթարեանց 5 կ., Շահնազար Ամիրխանեանց 5 կ., Խաչատուր Աստուածատուրեանց 10 կ., Երուանդ Թումանեանց 5 կ., Աստուր Ջաղացպանեանց 6 կ., Ստեփան Շարբաթեանց 5 կ., Արտաշէս Տէր-Բաղդասարեանց 40 կ., Մինաս Ռուստամեանց 8 կ։ Մնացած մի քանի աշակերտները վճարել են երկու երեք-մի կոպէկներ։ Ընդամենը եօթը ռուբլի։

* * *

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

4 մարտի

Անցեալ տարվայ աշնան վերջերից մինչև այս տարվայ մարտի սկիզբը 12 ներկայացումն է եղել Երևանում։ Դորանից երկուսը Սահականուշեան օր. դպրոցի օգտին է եղել, մէկը պ. Գէորգ Սարգսեանի օգտին, մէկը պրոգիմնազիոնի աղքատ աշակերտների, մէկը «Արևելեան Դպրոցասիրաց» օգտին, իսկ եօթը Գայանեան օր. դպրոցի օգտին։

Բացի դորանից այդ 12 ներկայացումից եղել է երկուսը ռուսաց լեզուով, տասը՝ հայոց։ Հայերէն լեզուով ներկայացրել են «Ոճրագործի ընտանիքը», «Կողոպտած փոստը», «Թուղթ խաղացողի կեանքը», «Շուշանիկը», «Անի քաղաքի աւերումն», «Խաթաբալայ», «Քանդած Օջախը», «Արտաշէս և Սաթինիկ», «Ոսկան Պետրոսիչը դժոխքում», «Բռնի ամուսնութիւնը» և մի երկու ուրիշ զաւեշտներ։ Չեմ յիշում թէ ռուսաց լեզուով ինչ են ներկայացրել։

Ներկայացումներից երեքին մասնակցել է թեմ. դպրանոցի ուսուցչական խումբը. 6—7 Գայանեան դպրոցի ուսուցչական խումբը։ Երկոքին խմբերին օգնել են օրիորդ Խուդաբաշեանը, օրիորդներ Քալեանները, տիկին Եփեմեայ Մատաթեանը, օրիորդ Փառանձեմ Մելեանը, տիկ. Սարգսեանը ու մի քանի երիտասարդներ։ Բացի պ. Գէորգ Սարգսեանից՝ բոլոր մասնակցողները ձրի են աշխատել։ Պ. Սարգսեանն էլ իր օրենեֆիսից ոչինչ օգուտ չը տեսաւ, թէև 75 ռուբլի էլ ընծայ ստացաւ Ներկայացման օրը։

Թատրոնը չունենալով իր համար կահկարասիներ և զգեստներ, ամեն մի ներկայացման ժամանակ խմբերը ստիպված են լինում մանաւոր տներից հաւաքել թէ՛ աթոռներ, թէ՛ զարդեր և թէ՛ զգեստներ։

Մի և նոյն ժամանակ խմբի ներկայացուցիչները ստիպված են լինում երեսները մնդացնելով տոմսակները մանածել տանից տուն, խանութից խանութ և զանազան տեղեր՝ վաճառելու համար։

Առաւել դժուարութիւն է լինում այն խմբերին, որոնք Գայանեան դպրոցի օգտին չեն ներկայացնում. թատրոնը տրվում է սոցա մի երկու կամ երեք կրկնողութեան համար. միւս կրկնութիւնների ժամանակ ստիպված է լինում խումբը մանաւոր մարդկանց՝ այսինքն, խմբի այս կամ այն անդամի տունը գնալու կրկնութեան համար, որից մեծ վնաս է լինում տան տիրոջը։ Ի նկատի ունենալով որ խմբի մեծ մասը հարուստ մարդկերանցից չէ բաղկացած, այլ աղքատ վարժապետներից կամ արհեստաւորներից, որոնք յարմարաւոր բընակարանից էլ զուրկ են, այն ժամանակ պարզ է որ բոլոր ծանրութիւնն ընկնում է խմբի անդամներից երկուսի կամ երեքի վրա, որք եթէ մի ներկայացման ծանրութեանը դիմանում էլ են, միւսներին չը դիմանալով գործը մնում է անորոշ դրութեան մէջ, կամ կրնայի քաղերով է ընթանում։ Այս է պատճառը որ Գայանեան դպրոցի խումբը 7 անգամ ներկայացրած ժամանակ միւս խմբերը հազիւ թէ երկու կամ երեք անգամ կարողանում են ներկայացնել։ Բացի սորան՝ միւս խմբերի ներկայացման ծախսը միշտ երկու կամ երեք անգամ չատ է լինում, քան թէ Գայ. դպ. խմբինը, որովհետև միւս խմբերը պարտաւոր են լոկ բեմի համար վճարել 50—70 ռուբլի, ներկայացումից ճիշդ հինգ ժամ առաջ. այդքան ևս միւս ծախսերն են լինում, ուրեմն մինչև 120—150 ր. տոմսակ չը լինի վաճառված՝ միւս խմբերը չեն սիրտ անում ներկայացումն սկսել, այն ինչ Գայ. դպ. խումբը 50—60 կամ 70 ռուբլի տոմսակ ևս վաճառած լինի, որով մանր ծախսերը կարող լինի ծածկել, ներկայացումից ետ չի մնայ։ Թատրոնի լրիւ հաւաքական գումարը լինում է 300—350 ր., երբեմն փոքր ինչ աւելի. ամեն ներկայացման կարելի է ենթադրել որ այդ գումարի կէսը կը հաւաքվի, ուրեմն Գայ. դպրոցի խումբը կէսը հաւաքված ժամանակ կարող է ներկայացնել և օգուտ ստանալ մօտ 100 ռուբլի. իսկ միւս խմբերը՝ կէսը ժողովված ժամանակ ևս եթէ ներկայացնեն, ոչինչ օգուտ չեն կարող ստանալ։ Այս պատճառաւ պ. Գ. Սարգսեանի բենեֆիսին վաճառվեց մօտ 180 ռուբլի տոմսակ, դորանից բեմն ստացաւ 70 ռուբլի, մօտ 80 ռուբլի մանր ծախսեր եղան, իրան հազիւ մնաց 30 ռուբլի։

Այս տարի Երևանի ժողովուրդը, զլխաւորապէս հայ ժողովուրդը, թատրոնին տուել է մօտ 2600 ռուբլի։ Ես կարծում եմ որ եթէ թատրոնը մի մշտական խումբ ունենար և մի վարչական ժողով, նախ՝ այդ գումարի կրկնապատիկը կըստանար, երկրորդ՝ ներկայացումներից ժողովուրդը կրկնապատիկ և եռապատիկ մեծ բարոյական օգուտ կը ստանար. երրորդ՝ ուսուցչական խումբը կը կատարէր իր ուղղակի պարտականութիւնը և դպրոցների յառաջադիմութեանը կը նուիրէր իր բոլոր ուժերը. չորրորդ՝ խումբերի և ժողովրդի միջից կը վերջանար զանազան սրտամաշ վէճերի առիթը. հինգերորդ՝ թատրոնը իր բուն նպատակին ծառայելուց զատ՝ ազգային դպրոցներին ևս համեմատարար աւելի մեծ օգուտ կը մատակարարէր։ Բայց արդի թատրոնական չէնքը չէ կարող յիշեալ նպատակներին ծառայել, նախ՝ այն պատճառաւ որ շատ փոքր է թէ դահլիճը և թէ բեմը, և այդ պատճառով տոմսակների դները շատ թանգ են նշանակվում և միայն հարուստներին է

մատչելի լինում։ Երկրորդ՝ դահլիճը մի և նույն ժամանակ և դասարան և թատրոն լինելով, շատ անգամ ներկայացման հետևեալ առաւօտեան, մինչ կարգի բերելը, դասերի ժամանակն անցնում է և կամ թէ այդ առիթը չը տալու համար, պէտք է միշտ տօն կամ արձակուրդ օրերին թողնել ներկայացումն և սրանից էլ շատ անյարմարութիւններ են ծագում։ Երրորդ՝ բացի այն որ դահլիճը և բեմը շատ փոքր են, գործողութեանց միջահատներում ժողովուրդը ստիպված է լինում տեղից չը շարժվելու, որովհետև ոչ ընդարձակ միջանցք և ոչ ծխելու կամ հանդստանալու սենեակներ ունի թատրոնը, ուստի ժողովրդի առողջութեան մեծ վնաս է լինում այդ անյարմարութիւններից, ներսը մնացողը վատ օդից է խեղդվում, դուրս եկողը ցրտից է վնասվում։—

Այս բոլոր հանդամանքները 'ի նկատի ունենալով, կը ցանկայի որ Երևանայ ազգային բոլոր դպրոցները միանալով, քաղաքի մի յարմարաւոր տեղում չինէին մի յարմարաւոր թատրոն, որի չինութիւնը, արդի թատրոնից երկու անգամ մեծ լինելով, կարժենար 7000—8000 ր., բայց տարեկան մօտ 5000 ր. օգուտ կը բերէր, որով կարելի կը լինէր տեղական երիտասարդներից մի մշտական խումբ կազմել և պահել և մի և նույն ժամանակ մնացած արդիւնքից բոլոր տեղական ազգային դպրոցներին համահաւասար բաժին հանել։—

Համոզված եմ որ եթէ այդ օգտաւէտ գործին ազգային դպրոցների հոգաբարձուները միաք չը դարձնեն, մասնաւոր մարդիկ կը ձեռնարկեն, որովհետև Երևանում ոչ մի անշարժ կալուածք 10%-ից աւելի արդիւնք չէ բերում, այն ինչ թատրոնը 30—60 և 70% ևս կարող է բերել։—

Խօսքս չը վերջացրած պարտք եմ համարում ինձ յայտնել, որ Սահականուշեան օր. դպրոցի օգտին երկու անգամ ներկայացրած խաղից հաւաքվել է 720 ր. 90 կպ., որից թատրոնի և այլ ծախքերի մասին 159 բուբ. 90 կ. դուրս գնացած լինելով, մնում է զուտ արդիւնք 550 բուբ. 91 կ. որից 500 բուբլին հասել է յիշեալ դպրոցի հոգաբարձութեան, մնացածը դեռ ևս ապառիկ է։—

Իբրև մի մասնաւոր մարդ յայտնում եմ իմ շնորհակալիքը թէ Սահականուշեան և թէ Գայ. դպրոցների օգտին խաղացող անձերին, որք չեն խնայում իրանց ժամանակը և հանդստութիւնը ազգային հիմնարկութեանց օգտին։

Սկսունի

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

5 մարտի

Ուսանողական վերջին բաւական անյաջող ներկայացումը առիթ տուեց շատերին տրտմելու, մի քանիսին անմիտ կերպով ուրախանալու, նույն իսկ հասարակութեան մի մասին անբաւական մնալու։ Անկարելի է ծածկել ճշմարտութիւնը՝—պիէսան անյարմար էր, խաղացողները բացի մէկից վատ էին,—նույն իսկ այս տողերը գրողը չափազանց ստոր և ծիծաղալի էր իր դերում։ Բայց ով որ գործին ծանօթ է, ով որ տեղեակ է այն անբաղդ հանդամանքներին, որոնցով շրջապատած էր այս անգամ մեր թատրոնական գործը, նա մի մեղադրական խօսք անգամ չի ասի ուսանողներին։ Միթէ կարելի է կարծել, որ եթէ մի որ և իցէ հնար մնէր ուրիշ պիէսա տալու, մենք այնքան անհեռատես կը լինէինք, որ «Արշակ բ-ի» պէս ցնդաբանութիւնով հիւրասիրէինք մեզ միշտ հաճակրող Մօսկվայի հայ հասարակութիւնը։ Մենք միշտ ընդդէմ ենք եղել չոր ու անմիտ ողբերգութիւններին և կը մնանք նրա անհաշտ թշնամիներ։ Հոկտեմբերից սկսած մինչև յունվար մենք ամենայն աշխատութիւն գործ էինք դնում պատրաստելու Սունդուկեանցի դրուածներից մէկը, հեռագրով ուրիշ կոմեդիաներ էինք պահանջում Թիֆլիսից, բայց ամեն մի քայլափոխում հանդիպում էինք անփախչելի արգելքների։ Առաջ քան մեղադրել, առաջ քան անբաւականութիւն ցոյց տալ հարկաւոր է աչքի առաջ առնել մեր ուսանողական կեանքի մի քանի ընտանեկան հանդամանքները, որոնք բացել հասարակութեան առաջ թոյլ չէ տալիս մեր խոհեմութիւնը։ Բաւական է միայն ասել որ մենք ստիպված էինք տալ անպատճառ այնպիսի պիէսա, ինչ տեղ կանացի դեր չը կայ։ «Արշակ բ-ը» այդ անհամ գրուածներից մէկն է։ Մենք ստիպված էինք այդ պիէսայով ձանձրացնել հասարակութիւնը, որովհետև մեր բարոյական պարտականութիւնն էր մտածել մեր այն չքաւոր ընկերների վրա, որոնց ապրուստի մեծ մասը լրացնում է թատրոնական ներկայացումը։ Եթէ թատրոնը մեր կապրիզից կախված լինէր, մենք ի հարկէ լաւ կը համարէինք ոչինչ չը տալ, քանց թէ մի դարդակ բան. բայց թատրոնական ներկայացումը մեզ համար անհրաժեշտ պահանջ է դարձել։ Մենք հաստատ հաւատացած ենք որ անբաւականութիւն կարող էր յայտնել հասարակութեան այն չնչին մասը, որի մէջ կեղտոտ հաչիւն է միայն խօսում, որ անպատճառ պահանջում է իր տուած փողի համեմատ բաւականութիւն ստանալ, որ ոչ թէ ուղիղ որտով է զոհում ուսանողութեանը, այլ չպրտելով «սեղնում է» մի քանի բուբլ օրպէս օղորմութիւն։ Իսկ հասարակութեան մեծ մասը, այն ազնիւ հարուստ պարոնները, որոնք առատ ձեռքով ամենայն տարի նուիրում են ուսանողութեանը յայտնի դումարներ, իրանց երբէք այնքան չեն ցածացնի, որ անբաւականութիւն ցոյց տան մի անյաջող ներկայացման մասին։ Նրանք զոհում են ոչ թէ թատրոնական ներկայացումն տեսնելու համար, այլ աղքատ ուսանողներին օգնութեան ձեռք հասցնելու համար։ Մենք հաստատ հաւատացած ենք որ Մօսկվայի պատուելի հայ հասարակութեան մեծամասնութիւնը առանց ուշադրութիւն դարձնելու վայր ի վերոյ խօսքերի վրա, կը շարունակի մեզ համակրել, և մենք կաշխատենք արժանաւոր կերպով գնահատելու նրա համակրութիւնը։

Ս. Դաղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք պ. Սամսոն Ապրէլեանցից 50 կոպէկ յօգուտ Վանի սովատանջների։

—

ԹԻՖԼԻՍԻ Ներսիսեան հայոց ազգային-հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնը կարգադրել է կատարել հոգեհանդիստ ապրիլ ամսի 7-ին, Աւետաց օրին, Աւետիք Փիրոյեանցի գերեզմանի վրա, Ս. Նշան եկեղեցու գաթում, պատարագից յետոյ։ Հանդուցեալը նուիրել է Ներսիսեան դպրոցին մի արդիւնաւոր կալուածք։

—

Զարմանալի է ինչպէս անհամբեր են հայերը։ Օրինակ Երևանից նամակ ենք ստանում, թէ ինչի չեն տպվում Վանի սովելոց համար Երևանցիների նուիրատուութիւնների ցուցակները։ Մենք կրկնում ենք. փողերը ստանալուն պէս, իսկոյն ուղարկում ենք, բայց նուիրատուների ցուցակները այնքան շատ են և այնքան մեծ են, որ մի անգամից բոլորն էլ չենք կարող տպել։ Հաւատացնում ենք որ ոչ մի ցուցակ չի կորչի, միայն թէ համբերութիւն ունենան։ Աշխարհիս ամեն ծայրերից նամակներ ենք ստանում, միթէ Երևանցիները կարծում են որ նրանք են միայն նուիրատուութիւններ անում։ Քիչ համբերութիւն ունենան, և կը տեսնեն, որ բոլորի նամակներն էլ կը տպվեն։ Այժմ Երևանի նուիրատուների ցուցակները արդէն տպվել են, բայց Երևանցիները դեռ չը սպասած որ համարները հրատարակվեն, անհանդիստ են լինում և վրա վրա նամակներ են գրում, կարծելով որ փողերը կորան։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Փետրվարի վերջերում քաղաքումս լուր տարածվեցաւ, որ տեղիս յաջորդ Գրիգորիս վարդապետ Տէր-Սահակեանց Սինօդի անօրինութեամբ փոխադրված է այստեղից ուրիշ տեղ։ Այս լուրը լսելով, Հին-Նախիջևանի հասարակութիւնը շատ ուրախացաւ, յոյս ունելով, որ յաջորդ-հայրը այստեղից գնալով, իր հետ կը տանի հասարակութեան մէջ ցանած երկպառակութեան սերմերը»

—

Եկող տարի յունվարի 1-ին պէտք է հրատարակվի Փարիզում Կովկասի վրա մի գիրք ֆրանսերէն լեզուով «Le Caucase» վերնագրով։ Գրքի գինը կը լինի 10 բուբլ։ Վաղօրօք կարելի է գրել գրքին «Կենտրոնական գրավաճառանոցում» և Բէրէնշտամի մագազինում, Թիֆլիսում։ Գիրքը կը պարունակի Կովկասի նկարագրութիւնը պատմական, աշխարհագրական, ուսումնական և վիճակագրական կողմից։ Նոյնպէս նրա մէջ ամփոփված կը լինեն վարչական և արդիւնագործական տեղեկութիւններ։

—

Մարտի 29-ին ԹԻՖԼԻՍԻ ժողովարանում պ. Գէորգի Մէրէտէի կարդաց մի հրապարակական դասախօսութիւն վրացերէն լեզուով «Վրաստանի հին պատմութեան մասին»։ Բաւական շատ ժողովուրդ հաւաքվեցաւ ժողովարանի դահլիճում և լսողները ծափահարութիւններով վարձատրեցին դասախօսին։ Դասախօսութիւնը բարեգործական նպատակով կարդացվեցաւ։

—

ԵՐԵՒԱՆԻ մէջ հրատարակվող «Պատկ» շաբաթաթերթը հաղորդում է հետևեալը։ «Նորերումս Երևանի Կողէր անուանված գերեզմանոցում գտնվել է մի կնոջ մարմին։ Տեսողները պատմում են, որ մարմինը կրծքից ներքև կտաւով պատատված է եղել, իսկ նորանից վերև բոլորովին բաց, դէմքի կաշին քերթած, մազերը կտրատված էին։ Թիկունքի կողմում երևալիս է եղել գնտակի տեղ. կրունները վիրաւորված էին։ Արդէն քննութիւն է սկսվել և երևի չուտով կը յայտնվի այդ կնոջ ով և ինչի համար սպանված լինելը։»

—

Ելիզավետպոլ, մարտի 30-ին, ժամը 5-ին երեկոյեան, դարձեալ հրդեհ յայտնվեցաւ ԹԻՖԼԻՍԻ Երևանեան հրապարակի վրա գտնվող Զուբալովի տանը։ Հրդեհը շուտ հանդցրին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Լրագիրներից տեղեկանում ենք, որ լորդ Բիկոնսֆիլդ պարլամենտը արձակելուց առաջ զանազան լուրեր էր տարածում, որպէս զի ընտրութիւնների ժամանակ պահպանողական կուսակցութիւնը յաղթող հանդիսանայ։ Ի միջի այլոց նա տարածեց այն լուրը, իբր թէ Գերմանիան, Աւստրօ-Ունգարիան և Անգլիան մտադիր են դաշնակցութիւն կապել եւրոպական խաղաղութիւնը պահպանելու համար և որ այդ դաշնակցութիւնը կարող է կայանալ միայն այն դէպքում, եթէ Անգլիան պահպանողական մինիստրութենից կը կառավարվի։ Մարտի 15-ի պարլամենտի նիստի ժամանակ լորդ Բիկոնսֆիլդ մի ճառ կարդաց, որի մէջ ակնարկեց, թէ եւրոպական անհամաձայնութիւններ են ստաղվում, որոնց վերջացնելու համար հարկաւոր է, որ Անգլիան խառնվի գործի մէջ։

Անգլիական «Times» լրագիրը, քննելով այդ ճառը, պախարակում է մինիստրի մութ ակնարկութիւնները և բացարձակ յայտնում է, որ եւրոպական խաղաղութենը վտանգ չէ սպառնում։

Վերջին տասն տարիների անցքերը, բացի մէկից, միջազգային կռիւների տեղիք չեն տալիս, գրում է «Times» լրագիրը։ Այդ մէկ բացառութիւնը Ֆրանս-գերմանական պատերազմն է, որ Ֆրանսիական ժողովրդի մէջ այնպիսի յիշատակներ և զգացմունքներ է թողել, որոնց անհետացնելը գրեթէ անկարելի է։ Մինչև այժմ անբաւականութեան համար պատահած առիթները ոչնչացրած են գերմանական և մանաւանդ ֆրանսիական պետական մարդկերանց խոհեմութեան շնորհիւ։

Բացի այդ միակ սև կէտը Եւրոպայի քաղաքական հորիզոնի վրա, չէ երևում մէկ ուրիշը, որ սպասել տար քաղաքական ապագայ փոթորիկներ։ Ազգայնութեան սկզբունքը աջողութիւն ունեցաւ ամեն տեղ, ուր նա իրաւունք ունէր յաղթող հանդիսանալու. իտալական և գերմանական ժողովուրդները միացած են, Արևելքում ապրող սլավեան ազգերը ձեռք բերին անկախութիւն։ Ուրեմն եւրոպական պատերազմ սկսելու համար ոչ մի խելացի առիթ չը կայ։ Այդպիսի մի պատերազմ կարող է սկսվել կամ նուաճումների նրպատակով կամ վրէժխնդրութեան զգացմունքից դրդված։

Արևելքում, ճշմարիտ է, Բերլինի դաշնագրով ստեղծած գործերի դրութիւնը դեռ չէ ամրացել, բայց ոչ մի պետութիւն շահ չունի այդ դրութեան փոփոխութենից։ Մինչև անգամ Ռուսաստանը ներկայ հանդամանքներում այդ փոփոխութիւնը չէ ցանկանում։

Ինչ կը վերաբերի Անգլիային, նրա խառնվելը եւրոպական գործերի մէջ կարելի է երկու պատճառներով արդարացնել։ առաջինը պէտք է պաշտպանել Բելգիայի անկախութիւնը և երկրորդ՝ պէտք է Կ. Պոլիսը սուլթանի իշխանութեան տակ թողնել։ Բելգիայի անկախութիւնը պահպանելու համար 1870 թվականին պարլամենտի օգնութեամբ աշխատեց Գլադստոնի մինիստրութիւնը, իսկ Կ. Պոլսի հարցը անդառնալի կերպով Անգլիայի հաւանութեամբ վճռեց Բիկոնսֆիլդի մինիստրութիւնը։ Բացի այդ երկու կէտերից Անգլիան առիթ չունի եւրոպական գործերի մէջ խառնվելու համար։

ԱՖԳԱՆԻՍՏԱՆ

—

Լրագիրների մէջ հետևեալ տեղեկութիւններ ենք կարդում Աֆգանիստանի մասին։

Աֆգանիստանից եկած վերջին լուրերից երևում է, որ տեղացիների և անգլիացիների մէջ շուտով պատերազմական գործողութիւնները նորից կը սկսվին։ Պատերազմական պատրաստութիւնները տեսնված են։ Լեռնային անցքերը փակող ձիւնը հալվել է, ցրտերը անցել են. այժմ պատերազմ սկսելու համար ամենայարմար ժամանակն է։

Ամենից առաջ շարժվեցին Մահմեդ-Ջանի զօրքերը, որոնց նա ձմեռվայ ընթացքում հաւաքել էր։ Նոքա ուղևորվում են Կաբուլի նկատի ունենալով, որ Թուրքեստանի և հիւսիսային միւս նահանգներում գտնված աֆգանցի զօրքերը միաժամանակ կը յարձակվեն Կաբուլի վրա։ Մահմեդ-Ջանի ձեռքի տակ գտնված ոյժերը բաւական չեն մտադրված պատերազմի համար։ Անցեալ դեկտեմբերին Կաբուլը շրջապատված էր աֆգանիստանցի զօրքերի աւելի մեծ ոյժերով, բայց անգլիացիները այնու ամենայնիւ կարողացան նրանց յետ մղել։ Նոյնը և այժմ կը պատահի, մանաւանդ եթէ շուտ հասնեն Բոմբէյից անգլիական մի քանի զօրաբաժիններ, որոնց գեներալ Ստիւարտ սպասում է։ Այս դէպքում գեներալ Ստիւարտ կարող է յարձակվել Մահմեդ-Ջանի վրա։

Այս հանդամանքը երևի յայտնի է աֆգանական զօրքերի առաջնորդին, բայց նա յոյս ունի, որ օգնութիւն կը ստանայ հիւսիսից և արևմուտքից։ Հաստատ աղբիւրներից յայտնի է, որ Մահմեդ-Ջանը յարաբերութիւններ էր հաստատել Աբդուրահման-խանի հետ, այն ժամանակից, երբ այս վերջինը հասել էր Աֆգանիստան։ Մահմեդ-Ջանը բանակցում էր նոյնպէս Հերատի կառավարչի հետ, բայց այնտեղից ոչինչ օգնութիւն չէ կարող ստանալ, քանի որ տեղացիների մէջ այդ կառավարիչը ոչինչ հեղինակութիւն չունի։ Ուրեմն եթէ Աբդուրահման-խանը ժամանակին կարշաւէ Կաբուլի վրա, անգլիացիները գործ կունենան թշնամի երկու զօրաբաժինների հետ։

Դժուար է նախագուշակել այս նոր կռուի հետևանքները։ Բազմաթիւ նշաններից երևում է, որ աֆգանական զօրքերի առաջնորդները գործողութիւնների որոշ նախագիծ ունեն։ Նոքա յոյս ունեն, որ սահմանների լեռնաբնակները կապստամբվեն և կը կտրեն գներալ Բօբէրտսի յարաբերութիւնները Հընդկաստանի հետ։ Այսպիսի մտադրութեան իրագործելը աֆգանցիների համար շատ դժուար է։

Իւրաքանչիւր կռուի ժամանակ աֆգանցի առաջնորդները ցոյց են տուել, որ նոքա անընդունակ են միասին գործելու համար։ Ամեն անգամ, երբ աֆգանական զօրաբաժինները մտադրվում էին միասին յարձակվել թշնամու վրա, զօրաբաժիններից մէկը ուշանում էր և այդպիսով խանգարում էր միւսների դիտաւորութեանը։ Այսպիսի անկարգութեան հետևանքը աֆգանական զօրքերի ջարդվելն էր լինում։

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԹՈՒԱՆՇԱՆՆԵՐ

Լոնդոնի «Economiste» թերթը մի յօդուած է տպել վերջին տասն և հինգ տարիների ընթացքում Եւրոպայի զինուորական ծախսերի շատանալու մասին: «Economiste» այդ յօդուածը տպում է իբրև աւելված զեներալ Մոլտկէի ճառին, որ նա խօսեց գերմանական պարլամենտի մէջ զինուորական օրէնքի առիթով և որով նա հաշուեց եւրոպական պետութիւնների զինուորների, հրացանների և թնդանօթների թիւը և մոռացաւ ասել, թէ դրանց վրա պետութիւնները որքան են ծախսում:

Այդ յօդուածը հետևեալ վերնագիրն է կրում «Ինչքան է ծախսում Եւրոպան Գերմանիայի միութեան պատճառով:» 1866 թուականից, երբ սկսեցաւ պրուսական միացնող քաղաքականութիւնը, եւրոպական պետութիւնների զինուորական ծախսերը չափազանց շատացան:

Եւրոպական պետութիւնների ընդհանուր ծախսերի գումարը 1879 թուին կազմում էր հինգ հարիւր ութսուն և հինգ միլիոն ութ հարիւր յիսուն հազար ֆունտ ստերլինգ, իսկ 1865 թուին երեք հարիւր իննսուն և ութ միլիոն ութ հարիւր հազար ֆունտ ստերլինգ: Ուրեմն 1879 թուի ծախսերը, համեմատելով 1865 թուի ծախսերի հետ, շատացել են 177,000,000 ֆ. ստ., որ ռուսաց փողերով կազմում է մօտ մէկ միլիարդ եօթ հարիւր միլիոն րուբլ:

Այդ ահագին գումարի 2/3 բաժինը զինուորական պէտքերի համար է ծախսում: Զինուորական ծախսերի աւելանալը պետութիւնների մէջ հետևեալ կարգով է կատարվել. ամենից շատ Գերմանիայի մէջ, յետոյ Աւստրո-Ունգարիայի, Ֆրանսիայի, Անգլիայի Ռուսաստանի, Իտալիայի, Սպանիայի, Հոլանդիայի, Բելգիայի, Դանիայի, Շվեդիայի, Նորվեգիայի, Պորտուգալիայի, Յունաստանի, Թիւրքիայի և ամենից քիչ Շվէյցարիայի մէջ:

Եւրոպական բոլոր պետութիւնների պարտքերի ընդհանուր գումարը 1865 թուից մինչև 1879 թիւը շատացել է տասը միլիարդ վեց հարիւր իննսուն և եօթը միլիոն րուբլիով: «Economiste» յայտնում է, որ պարտքերի այդչափ մեծանալը պատահել է պատերազմների և պատերազմական պատրաստութիւնների պատճառով:

Պէտք է ի նկատի առնել, որ վերոյիշեալ թուերով հաշվում են ոչ թէ բոլոր զինուորական ծախսերը, այլ վերջին 15 տարիների ընթացքում աւելացածը միայն:

Մի աւելի կատարեալ գաղափար ստանալու համար, թէ որքան ծանր է Եւրոպայի համար այդպէս զինաւորված լինելը, բացի վերոյիշեալ թուանշաններից պէտք է հաշուել նոյնպէս միլիոնաւոր աշխատող ձեռքեր, որոնք խաղաղ ժամանակ հեռացրած են աշխատանքից և հրացանը ձեռքին են կանգնած:

Զինուորական ծառայութիւնը մեր դարի ժամանակամիջոցում հազիւ երեսուն հատ ուղիղ կարդալու չափ բաւական լինելով, պատճառ շատ բացայայտ է, որ աշակերտ մը մինչև ցայսօր դպրոցէն և վարժապետէն այնչափ կը սոսկայ, որչափ կը սոսկայ մահապարտ մը բանդէն և դահիճէն. տղա մը վարժարանի դռնէն ներս մտածին պէս գիակ կը դառնայ, նա այնչափ ամօթխած և անհամարձակ կը լինի, որ եթէ մէկ մը նորա դասին վերաբերեալ հարցում մը ուղղելու լինի անոր, աշակերտ հազար անգամ մեռնիլ կը նախընտրէ, քան թէ անոր հարցումին պատասխանել. աշակերտ մը դրպրոց մտածին պէս պէտք է կարդայ այբենարան, Հեղարան, Սաղմոս, Ժամագիրք, Աւետարան, Գործոց, Նարեկ, զատնք լինելու համար առնուազ 8—10 տարի պէտք են. անոնք որ աղքատ են չուտով կը ձգեն դպրոց, և ոտակ չահելու կերթան, իսկ հարուստի տղաներ, որք կրնան աւելի երկարօրէն դպրոց յաճախել, սոնք ալ յոյս կը դնեն իրենց հօրերու վաստակած հարստութեան վրայ և կարհամարհեն ուսումը իբրև բոլորովին ապարդիւն բան մը:

Ահաւասիկ համառօտ նկարագիր մը մեր դպրոցաց, որ աւելի սպանդանոցի կը նմանի քան դրպրոցի. դպրոցէն ներս մտնող կը տեսնէ բաւականին ընդարձակ սենեակ մը 4—500 տղաներ իրարու վրայ շղված, գետնի փոշիների մէջ նստած մանուկներ, անդին ալ վարժապետ մը փայտ մը ձեռք բռնած և ֆալախան պատէն կախած, որ աշակերտաց լուր կենալ կը հրամայէ, հազար տեսակ հայհոյանքներ անելով աշակերտաց: Մեր դպրոցներ այս դիրքի մէջն էին, երբ «Հայկազեան» ընկերութիւն կազմուեցաւ, որոյ նպատակը ազգային մանուկներ դաստիարակել էր: Այս ընկերութիւն դպրոց մը բացաւ անմիջապէս «Հայկազեան» դպրոց անունով, և առաջին անգամ լինելով աշխարարարի ընթերցում մտցուց իր վարժարանի մէջ. «Հայկազեանի» աշակերտ միւս դպրոցաց աշակերտների պէս տաս տարիներով չը պիտի կարդար իրեն չը հասկցած գրաբառ մեռած լեզուն (Աստուած ողորմի իր հոգւոյն), այլ պիտի կարդար քերական, ընթերցարան մը, ազգային պատմութիւն, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, տաճկերէն, ֆրանսերէն, մատենագրութիւն և այլն և այլն: Այս դասեր բոլորովին նոր էին Վանի համար, միւս դպրոցաց աշակերտներ չէին գիտեր թէ ազգային պատմութիւն ինչ կը սորվեցնէր, եթէ մէկ մը անոնց հարցնելու լիներ, թէ դու ինչ ազգէ ես, պատասխան պիտի ընդուներ քրիստոնեայ եմ: «Հայկազեան» ընկերութեան վարժարան շատ արագ յառաջադիմեց, և փոխանակ քաջալերելու գոնալու, ասկէ անկէ շատ մեծ հալածանքներ կրեց. «Հայկազեանի» աշակերտներ փողոցէ մ'անցած ժամանակ, փողոցի ստամբակներէն և միւս դպրոցաց աշակերտներէն կը գանակոծուէին: Երկու երեք տարի այս դիրքով շարունակուեցաւ. «Հայկազեան», և ամեն ժամանակ ազգային հանդէսներ, կը կատարուէին անդ: Երթալով հետզհետէ «Հայկազեան» վարժարան երեսի վրայ մնաց, և «Հայկազեան» ընկերութեան անդամներ հրաժարվեցան մեծաւ մասամբ, և դպրոցը դոցուելու վրայ էր երբ հասաւ պարոն Մկրտիչ Փորթուգալեան էֆէնդին. 3—4 ամիս Վան մնաց Փորթուգալեան էֆէնդին և այս քիչ ժամանակամիջոցումնա շատ մը բարիքներ արաւ Վանեցւոց, մի ընկերութիւն կազմեց «Հայրենասէր» անունով, որոյ նպատակն էր հայրենասիրական զգացումներ տարածել Վանի մէջ երեք միջոցներով, լսարանով, կիրակնօրեայ դասարանով, և ընթերցարանով. 15 օրն անգամ լսարան կար «Հայրենասէր» ընկերութեան կենտրոնատեղի եղող «Հայկազեան» վարժարանի մէջ, ամեն կիրակի դաս կը տրուէր դաս առնել ուզող ո և է հասակի ազգայնոց, ասկէ զատ ամեն մարդ ազատ էր կարդալու ընկերութեան բոլոր գիրքեր և լրագիրներ չընչին վարձք մը վճարելով:

Պ. Փորթուգալեանի չնորհիւ մի քիչ բարելաւեալ սկսաւ «Հայկազեան» դպրոց, և Վանի երիտասարդներ օրինակ առնելով «Հայրենասէր» ընկերութենէն, ընկերութիւններ կազմեցին. յիշեմ մէկ քանիսին անուններ: «Բարեսէր» ընկերութիւն, որոյ նպատակն է կիրակի օրեր սուրբ պահել Աստուածաշունչ կարդալով և երբեմն ալ թատրոններ ներկայացնելով: «Ազգանուէր» ընկերութիւն, որ նպատակը նոյն է «Հայրենասէր» ընկերութեան նպատակին հետ, «Ուսումնասէր» ընկերութիւն որոյ նպատակն ալ լսարան ունենալ է. ասանցմէ զատ կան երեսունի չափ ընկերութիւններ, որոց նպատակը իրեարավարժութիւն է, ասոնք աւելի կոլեով կը զբաղին, քան թէ իրենց նպատակին կը ծառայեն. այժմ ընկերութիւն կազմել մոդա դարձած է Վանի մէջ, և ամեն մարդ ընկերութեան մը անդամ է: Այսպէս ահա Վանեցիք արդի մոդային հետևելով, ամեն օր ընկերութիւններ կը կազմեն, քանիմ ամսէ վերջ քիչ մը տակ և գիրք հատաբելով, օր մնալ տեսնես գրապահը գրաղարան պարպած է, գիրքեր և տակներ իրենց տուն տարած է, ասոր վրայ կռիւներ կը յարուցուին և ընկերութիւնը կը տապալի:

Այսպէս ահա երբ կը լսուի որ Վանի մէջ բազմաթիւ ընկերութիւններ կան, թող չը կարծեն ուրիշներ որ Վանի ընկերութեանց բոլորն ալ ազգին ծառայելու նպատակու կազմուած են, այլ ինչպէս ըսի մոդային հետևելու համար:

Մեր միւս դպրոցներ գրեթէ նոյն են, ինչ որ էին առաջ. շատ քիչ տարբերութիւն արած են, «Հայկազեան» դպրոց հիմա դարձեալ երեսի վրա մնացած է: Մի դպրոց միայն կայ մեր քաղաքի մէջ, որ իրաւամբ դպրոց կրնայ համարուիլ, այն է «Արարատեան» ընկերութեան վարժապետանոց. աւելորդ կը համարիմ այս մասին տեղեկութիւններ տալ մանրամասնօրէն «Մշակի» ընթերցողաց. ուզող կրնայ «Արարատեան» ընկերութեան դ-րդ շրջանի տեղեկագիր ձեռք բերել և կարդալ, կարդացող կրնայ գաղափար կազմել «Արարատեան» մեծանուն ընկերութեան գործունէութեան մասին: «Արարատեան» ընկերութեան թէ վարժապետանոց և թէ գիւղային նախակրթարաններ շատ լաւ և բարեկարգ են, մի բան միայն լաւ չէ որ «Արարատեան» ընկերութեան դպրոցաց դասատուներ վանեցի լինելով, պէտք եղածին չափ բանգէտ չեն, կը յուսամ որ «Արարատեան» ընկերութիւն այս պակասը ևս կը լեցնէ, և յարմար դասատուներ բերել կուտայ յարմար տեղերէ, եթէ ոչ նախակրթարաններու գոնէ միայն վարժապետանոցի համար:

Թող Ներսէի մեզ, որ պահ մը մեր խնդրէն չեղեցանք, գանք դարձեալ մեր խնդրին վրա դրել. այս չափովս կարծեմ կրցի հասկցնել թէ որչափ յառաջ գնացած է վանեցի հայը, գէշ չը լիներ կարծեմ որ արական սեռի մտաւորական յառաջդիմութեան վրայ դրել ձգելով, դառնամ դէպի իգական սեռի մտաւորապէս յառաջդիմելուն վրայ դրել:

Վանի մէջ յառաջնում իգական սեռին համար յատուկ դպրոց չը կար. 8—9 տարի յառաջ Կ. Պոլսոյ մէջ կազմուած «Սանդխտեան» անուն ընկերութիւն Վանի մէջ դպրոց մը բացաւ աղջկանց համար. այս ձեռնարկը նոր լինելով առաջին անգամ ընդունելութիւն չը գտաւ վանեցիներէ, շատեր բարոյականութեան դէմ մեղանչել կը կարծէին, թէ որ իրենց աղջիկներ այդ դպրոց խրկէին, ասելով թէ «աղջիկն ինչ է որ կարդալ սորվի, հաց եփել, թոնիր վառել, կերակուր պատրաստել գիտնայ բաւական է» ահա այսպիսի մտածումով շատեր իրենց աղջիկներ դպրոց չեն խրկեր, և Վանի պէս բազմամարդ քաղաքի մը մէջ կայ մի դպրոց միայն աղջկանց համար, այն ալ դպրոց չը կրնար համարուիլ. բայց Աստուած թող դպրոց համարէ:

Խօսքերնիս եզրակայնելով, կասեմք թէ վանեցիք շատ ետ մնացեր են դարուս պահանջման համեմատ իրենց որդիներ դաստիարակելու մէջ. շատեր կը կարծեն որ վանեցիք բաւական յառաջդիմած են ուսման մէջ, և կը համարձակին ասել որ պօլսեցիներէն ալ աւելի, բայց ես որ զիրութիւն ունեցեր եմ Պոլսոյ դպրոցներ աչքէ անցնելու, տեղւոյս դպրոցներն այլ տեսած եմ, ես չեմ կրնար չը խոստովանել որ վանեցիք շատ տխուր կացութեան մէջ կը գտնուին դաստիարակութեան խնդրոյ մասին, վանեցիք, ոչ Բերլինի դաշնագիրը, ոչ եւրոպական տէրութիւններ չեն փրկեր զմեզ մեր ներկայ դերութիւնէն, միմիայն մենք կրնանք զմեզ փրկել, երբ փրկուել ուզենք:

Վահան

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դավրէժ, 29 փետրվարի

Այս միջոցիս շատերը հարցնում են ինձանից, թէ ինչ է պատահել, որ էլ Արմենակի նամակները չեն երևում «Մշակի» մէջ, չը լինի թէ անգութ զամբիւղը դրանց էլ սկսեց կուլ տալ.— Ես պատասխանեցի, թէ այդ երևոյթից ինչու էք վախենում, քանի որ դա բնականի պէս է, մինչև այժմ իմ նամակներից զամբիւղի մէջ չեն խորասուզվել, բայց այսուհետև կարող է պատահել դա, որովհետև յետադիմութիւնը պարսկահայի ճակատագիրն է: Ուրիշ տեղերի հայերը օր օրից առաջ են գնում, իսկ մենք զէպի յետ ենք դառնում և շատ ապրին իմ նամակները, որ այս բանում մեզ գոնէ արդարացրին. քանզի, որքան յիշում եմ, ես մի քանի նամակ պէտք է ունենամ խմբագրատան մէջ: Բայց մի բան խղճիս դիպաւ այս տողերի մէջ, և պէտք է որ ճշմարտութիւնը խոստովանեմ: Մեր պարսկահայերիս յետադիմութիւնը շատ էլ պարսաւանքի արժանի չէ, շատ էլ յանցանք չէ, մենք այդտեղ ունենք մի թագցրած միտք, ուրեմն թոյլ տուեցէք որ բացատրեմ դրան: Եղբայր, մի անգամ մտածեցէք, և ենթադրեցէք թէ այս բոլոր աշխարհս առաջ ընթանայ, առաջ անցնի և բոլորովին առաջանայ, ինչ էք կարծում, միթէ յետեր պէտք է դարդակ թողնել, միթէ յետևում առպարէզ չը կայ, միթէ յետևում գործող մարդիկ պէտք չեն: Ահա մեր պարսկահայերիս խելքը և ունակութիւնը, որ նրբամիտ հեռատեսութեամբ մեր սեպհական յետամնացութիւնից չենք հեռանում, և չենք էլ հեռանայ, թող ով ինչ ուզում է ասէ, ամեն ոք իր հաշիւը ինքն աւելի լաւ գիտէ:

Այս տարի Պարսկաստանում, ձմեռը խիստ ցուրտ էր, ձիւնով ու սառնամանիքով պատած: Մեր քաղաքում հացը ու ցորենը թէև սովորականից եռապատիկ գնով են վաճառվում, սակայն մատչելի են: Ցորեն ունեցողները չատապում են ծախելու, որովհետև հաստատապէս գիտեն, որ յառաջիկայ ամառը խիստ առատ հունձ կը լինի:

Մեր դերասանական խումբը՝ բարեկենդանի վերջին երկու շաբաթվայ մէջ, տուեց երկու թատերական ներկայացում, մին յօգուտ Լիլավա թաղի դպրոցներին, և միւսը նորահաստատ խնայողական ընկերութեան օգտին: Երկու ներկայացումներից դոյացաւ աւելի քան 300 բուբլի կամ 100 թուման: Առաջին ներկայացումն էր «Շուշանիկ» ողբերգութիւնը և մի ֆրանսերէնից թարգմանած կատակերգութիւն (La cloche du soir): Երկրորդն էր «Մեծն Ներսէս և Պապ թագաւոր» ողբերգութիւնը «Բարեկենդանի քէֆ» կատակերգութեան հետ, որ երկրորդն էլ բաւականին յաջող անցան և հասարակութիւնը գոհ մնաց:

Այդ օրերում մեր Արամեան դպրոցում կատարվեցաւ մի ազգային հանդէս, հիշատ բարեկենդանի հինգշաբթի օրը, ի յիշատակ Ս. Վարդանանց: Պատարագի արձակմանից յետ եկեղեցական դասը, ժողովուրդը և դպրոցների աշակերտները եկան դպրոցի բակը, ուր խօսվեցան և կարդացվեցան մի քանի ճառեր և աշակերտները երգում էին ազգային երգեր: Պատուելի հոգաբարձութիւնը հանդիսականաց համար պատրաստած էր մի աւատ նախաճաշ առաջնորդարանի դահլիճում. Հանդէսը բաւական սրտաշարժ էր:

Տեղիս՝ ռուսաց գիներալ հիւպատոսի կամեցողութեամբ, մեր քաղաքի հայոց մայր եկեղեցում եղաւ գոհաբանական աղօթք Ռուսաց Ալէքսանդր Կայսեր հրաշալի ազատութեան և նորա 25 ամեայ թագաւորութեան յօբելեանի յիշատակի համար: Պ. հիւպատոսը նոյնպէս և հիւպատոսարանի բոլոր ծառայողները ներկայ էին: Ներկայ էին նոյնպէս ֆրանսիացոց հիւպատոսը, եւրոպացիներ, և շատ ռուսաց և պարսից հպատակ հայեր գոհ և ուրախ սրտերով:

Դավրէժ քաղաքի հայ չքաւորների համար եղաւ մի հանգանակութիւն, որից դոյացաւ մօտ 300 թուման, որ ցորեն և ալիւր գնվելով բաժանվում է աղքատների և այնպիսիներին, որոնք «գործել ոչ գիտեն և մուրալ ամաչեն»:

Արմենակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 մարտի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ «Молва» լրագրին առաջին նախազգուշութիւն է տրուած: «Петербургскія Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ Աֆղանիստանում զեներալ Բոբերտսի զօրքերը սաստիկ ջարդվեցան: Սխալ են այն լուրերը, երբ թէ չինական զօրքերը անցել են ռուսաց սահմանները: Նիժնի-Ուսուրիսկի երկրում սահմանը անցել են չինական հասարակ բանուորներ: «Голосъ» լրագիրը հաղորդում է, որ չինական և եւրոպական ջրերի մէջ կը կենտրոնացնվի ռուսաց զինուորական նաւերի մեծ քանակութիւն: Ս. Պետերբուրգի մէջ կալանաւորված է Կուրիեր, որ մեղադրվում է ահագին քանակութեամբ կեղծ անցագիրներ շինելու մէջ: Կուրիերի կինը յարաբերութիւններ ունէր յեղափոխականների հետ: Նրանց մօտ գտնված է 92,000 բուբլ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 մարտի: Երէկ վախճանվեցաւ Պետերբուրգի մէջ պրոֆեսոր Կիտարի: Իշխան Գորչակով հիւանդ է կատաղով, պառկած է անկողնի մէջ և ոչ ոքի չէ ընդունում: Ֆինլանդացի զեներալ-լեյտենանտ Երնրօտ, բոլգարական կառավարութեան հրաւէրի համեմատ, համնձայնեցաւ Բոլգարիայի զինուորական մինիստրի պաշտօնը ընդունել:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Въ Кавказскомъ Обществѣ Сельскаго Хозяйства въ Тифлисѣ имѣется для продажи яйчки шелковичныхъ червей французской породы, воспитанныя Барономъ Бахомъ, въ окрестностяхъ Тифлиса, по 35 коп. за золотникъ.

Иногородныя обращаются съ требованіями въ Общество съ препровожденіемъ слѣдуемыхъ денегъ, почтовыя расходы на счетъ Общества.

3—3

Nous recommandons aux jeunes gens qui désirent aller en France terminer leurs etudes, l'Institution ROUSSEL à MARSEILLE. (Cours Julien, 14).—Des soins particulièrs sont, donnés aux langues vivantes. Sadresser á l'Institution, qui envoie un prospectus.

2—4

ՆԵՐԿԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ"

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Խեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ։ Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.։ Մէկ հատորի համար առանձին տոորագրութիւն չէ ընդունվում։

Տոորագրվել կարելի է՝ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մշակի» խմբագրատանը Յ. ՄԷԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆԻՆ։

Մամուլի տակից դուրս եկաւ դոկտոր Բօկի «Ուսումն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը։ Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում։ Գինն է 35 կոպ.

Գ. ԱԴԱՄԵԱՆԸ ցանկանում է ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ և գոյների բաղադրութեամբ ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ դասեր տալ։ Պայմանների մասին կարելի է նրա հետ խօսել նրա բնակարանում, Գոլովինսկի պրոսպեկտի վրա, Մուխրանովու տանը, Կլուբի տակ, առաւօտները 10—12 ժամ, և երեկոները 5—8 ժամ։ Դասերը կարող է տալ թէ իր բնակարանում և ցանկացողների տները այցելելով։ Նոյնպէս ընդունում է պատուէրներ ԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ նկարելու համար։

9—10

Օրերումս գուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Օ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում։

1. Ադամեան—քերթուածք և թարգմանութիւնք. Տփխիս 1880 թ. գինն է 1 ր. 25 կ.։

2. Դոկտոր Բոկ—Ուսումն առողջապահութեան Տփ., 80 թ. — 35 կ.։

3. Ֆրէյդուն—Տաւիդ յիսնաղի Տփ. 80 թ. — 30 կ.։

4. Ղուկասեանց—ընդհանուր պատմութիւն հայոց դպրոցների համար, հ. ա. Տփ. 80 թ. — 80 կ.։

5. Դամառ-Ռաթիպայ—մանկական երգեր 80 թ. անկազմ — 15 կ.։

6. Նոյնը կազմած — 25 կ.։

7. Սիլվիո Փէլլիքօի Ֆոխմինիացին Փրանկիսկէ (Ֆրանչէսկա դա Ռիմինի). Դանտէի Ֆրանչէսկան, Լէօփարդիի առ Իտալիան. Տարբոյ ծերը։ Ա. Մ. Ե. Պ. Տփ. 80 թ. գինը է — 70 կ.։

9—10

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ։

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բաթնեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շահմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.։

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրով վիներական և բողազի հ., Բէյլիս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ. Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վեմիշեվ ներքին հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Ռուդկովսկի ներքին հ., Շահէյմբօրսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների։

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բողազի հ., Բաթնեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.։

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շահէյմբօրսկի և Աստուածատուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.։

Շաբաթ. Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.։

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը։

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար։ Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը։

Աստանաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ։

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար։

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ։

Վաճառվում է նոր հրատարակված «Յիսնաղի Տաւիդ» Ֆրէյդունի գրքոյկը պ. Զ. Գրիգորեանցի և Կենտրոնական գրավաճառանոցներում։ Գրքոյկի Գինն է 30 կ., գաւառներից ցանկացողները կարող են ուղղակի դիմել Պ. Յովհաննէս Սուզանաճեանցին հետեւեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственый домъ № 13.

1. Երզնկեանց քահանայ—Մանկական երգարան, երգեր և պար-երգեր ընդունված է Ներսիսեան և Գայանեան դպրոցներում. գինն է . . — ր. 20 կ.
2. Մեծատունեանց—Երգարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց . . . . . 1 ր. — կ.
3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց։ Դիֆտերիտ բողազայաւ . . — ր. 25 կ.
4. Բժիշկ. Դ. Տէր-Գրիգորեանց—Վարակիչ հիւանդութիւններ.

(Ծաղիկ, կարմրուկ, սկարլատին, բծաւորտիֆ, անդրադարձ տենդ, դիֆտերիտ, ընդհատ տենդ, խօլերայ, դեղին տենդ, որովայնատիֆ և ժանտախտ։)

Սոցա յատկութիւններն, ծագման և տարածման եղանակներն և նախապաշտպանողական միջոցներ։

Վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում։

8—8

Փետրվարի 12-ից ԲԱՑՎԵՑ իշխան ՍՈՒՄԲԱՏՕՎԻ տանը ԿՕՆԴԻՏԷՐԻ և ՀԱՅԱՐԱՐԻ (пекарня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրովը, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վաճառվեն զանազան տեսակ կօնֆէտներ արժան գնով։ Թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ։ Օտար քաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОИ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Պատուէրները կը կատարվեն ամենայն ճշդութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեզ վրա առնելով։ Կօնֆէկտների գինը ֆունտը 40 կոպէկից մինչև 1 ր.։

ДВОЙНАЯ ИТАЛІАНСКАЯ БУХГАЛТЕРІЯ

Մի երեսասարդ տալիս է հաշուապահութեան դասերը՝ բանկի, ֆաբրիկայի, առևտրական կոմիսիոնէրութեան, երկաթուղու և այլն։

Հարցնել Թիֆլիսի Կազեոնի Պալատում, կամ Սուրբ Նշանի փողոցում, Միրզոյ սուդի դիմացը, № 17 պ. Յակոբը Տէր-Յակոբեանցին։

3—5

Մ. Միանսարեանցի ի ներքոյ յիշեալ տպագրութիւնների ամեն մի տպագրութեան մնացած բոլոր օրինակները միասին գնողներին (Թիֆլիս, Հայոց Վանքի Մեծ փոքր փողոցների անկիւնում, տպագրողի սեպհական տանը, № 4|2, բնակարան № 6) կը վաճառուին յետագայ գներով։

1. Հայկական Դրնար, երգարան, 8 ծալ, եր. 712 և առանձին 32 եր. այբբենական, երկուսը միասին . . . . . 70 կ.

4 Հազար օրինակից մնացել է մօտ հազար օրինակ, մօտ 700 ռուբլու։

2. Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը և տեսութիւնը, զանազան առանձին յաւելուածներով, 8 ծալ, եր. 274 . . . . . 20 կ.

1200 օրինակից մնում է մօտ 700 օրինակ, մօտ 140 ռուբլու։

3. Վայելչագրութեան գաղափարներ, 4 ծալ, 24 երես։ 6 հազար օրինակից լինի մնացած մօտ 4 հազար օրին., մօտ 500 ռուբլու։ . . . . . 10 կ.

4. Գունատ մելանով տպած վայելչագրութեան վարժութիւններ, տպածի վրա սև թանաքով գրելով, գիւրութեամբ կարելի լինի ուղղել և գեղեցկացնել ուսանողի գրութիւնը։ № 1—№ 5, հասարակ թղթի գնով, տ. ստօպան, կամ 480 թերթը, 4 ռուբլի մօտ 340 ստօպ, մօտ 1360 ռուբլու։ Թերթը մի կոպէկից պակաս։

5. Տղաշարներև տղացանցեր մեծ թաբաղա, 4 երես տպած, 6 հազար օրինակ մօտ 4 հազ. օրինակ կը լինի, մօտ 52 ռուբլու, թերթը . . . . . 5 կ.

6. Կոմբ ուսուցչապետի և անգղիացոց թագուհու բժշկի խնամատարութիւն երեխայոց, 8 ծալ, եր. 300։ . . . . . 15 կ.

1200 օրինակից մօտ 300 օրինակ կը լինի մնացած, մօտ 52 ռուբլու։

Մի քանի այլ տպագրութիւններ մօտ 20 ռուբլու։

Տպագրողը ինքը բնակվում է Պետերբուրգ, Знаменская, домъ № 22, кв № 7, углу Басейной.

ԹԻՖԼԻՍԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ստարշինաների խումբը յայտնում է պ. պ. անդամներին, ընդհանուր ժողովի վճռին համեմատ՝ անդամական լրացուցիչ տուրքի 7 ռուբլի վճարելը նշանակված է մինչև ապրիլի 1-ը 1880 թ. Իսկ ովքեր չի վճարի այդ փողը նշանակված ժամանակամիջոցին, կը համարվի ընկերութեան անդամութենից հրաժարեցրած։

Յունվարի 31-ին 1880 թ. Նորին Կայսերական Բարձրութիւն Կովկասի Փոխարքան բարեհաճեցաւ հաստատել «Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան» կանոնադրութիւնը։ Այս ընկերութիւնը մարտի 9-ին ունեցաւ ընդհանուր ժողով, որը ընտրեց իւր վարչութիւն և խմբագրական մասնաժողով։

Այն անձինք, որոնք կը ցանկանան ընկերութեան անդամ գրուել, կարող են դիմել ընկերութեան գանձապահ պարոն Մանուել Թաւադեանին Թիֆլիսի Առևտրական բանկի առաւօտեան 9-ը ժամից մինչև 2 ժամը։ Իսկ այլ և այլ խնդիրներ և տեղեկութիւններ այդ ընկերութեան մասին ստանալու համար պէտք է դիմել ընկերութեան վարչութեան նախագահ՝ պարոն Աբգար Յովհաննիսեանին։ Վարչութեան ատենադպիր Ա. Թիֆլիսեան։

3—10

Տպագրութեան համար պատրաստվում է «Դօն Կարլոս» (հետաքննութիւն ճշմարտութեան) Պրէսկոտի, «Աբրահամ Լինկօլն» ստրուկներին ազատող Վիլհելմ Հօֆմանի, և Մօլիէրի «Ամուսնացողներին խրատ» հայթարգմանութիւնները։

Թարգմանվումեն Մօլիէրի հետ «Ցաւիւ կամ Կեղծաւոր» և «Կեղծ հիւանդ» կատակերգութիւնները։

Անցած փետրվարի 17-ից նօտարական տով վերջացնելով բոլոր դրամական հաշիւները իմ առևտրական ընկերակցութեան վերաբերութեամբ Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ՍԵՐԳԵՅ ԳՐԻԳՕՐԵՎԻՉ ԼԱԶԱՐԵՎԻ հրատարակով յայտնում եմ, որ եթէ մի որ և է մարդու մօտ կը գտնվին ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՅԻԸ, իմ նրան տուած տոմսակներ (векселя) մասնաւոր և բանկային վէքսէյներ, և բոլոր ուրիշ պարտամուրհակներ և ակտեր, անուավեր եմ համարում և ինձ պարտաւոր չեմ համարում վճարել։

Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական Պ. ՆԻԿԻ. ԱՐՏ. ԱԼԱՎԵՐԴՈՎ։

Дозволено Цензурою 31 Марта 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона